ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

Հասարակական գործիչ, խմբագիր-հրատարակիչ, գրող ու թարգմանիչ Տ. Նազարյանը ծնվել է 1858 թ. Շուշիում։ 1881 թ. հաստատվել է Թիֆլիսում։ Հիմնադրել, հրատարակել ու խմբագրել է «Աղբյուր», «Տարազ» ամսագրերն իրենց հավելվածներով և մի շարք այլ ժողովածուներ, օրացույցներ (նաև ռուսերեն լեզվով)։ Հանդես է եկել ինքնուրույն գործերով («Ճպատդ քոլադ կտրի», «Արոզա» պիեսները), ակնարկներով, հրապարակախոսական հոդվածներով ու թարգմանություններով։ 1919 թ. Ղարաբաղի և Զանգեզուրի հայոց հայրենակցական միության հանձնարարությամբ և Փարիզում գտնվող Ազգային պատվիրակության. գիտությամբ տեսակցել է Անգլիայի արտաքին գործոց նախարարության պաշտոնյաների, Հռոմի պապի ներկայացուցչի հետ։ Փորձել է եվրոպական մամուլի միջոցով հասարակական կարծիք ստեղծել հօգուտ Ղարաբաղի և Հայաստանի։ 1925 թ. վերադարձել է հայրենիք, շանացել նպաստել Ղարաբաղի վերաշինությանը, այդ նպատակով կազմակերպել է Ղարաբաղի օգնության կոմիտե։ Մահացել է 1926 թ. սեպտեմբերին՝ Թիֆլիսում։

Մտերմական պաշտոնական կապեր է ունեցել բազմաթիվ մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների հետ։ Ստորև ներկայացնում ենք նրա նամակներից մի փունջ։ Ձեռագրերը պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Տ. Նազարյանի ֆոնդում (գործ 257, թթ. 1—15)։

Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

Մեծարելի բարեկամ![1]

2 մարտի 1882 թ.
№ 226 Շուշի

Անցյալ փետր. 17-ից գրած Ձեր նամակը ստացա, շնորհակալ եմ Ձեր համակրության համար։

Թիփ. ընկ. հայ գրք. հրատ.՝ խնդրեցի Ձեր ձեռագրերը, խոստացան շուտով ինձ հանձնել։ Կաշխատեմ նրանցից ընտրություն անել և տպել, եթե հարմար լինի։ Ինչ կվերաբերե «Ղլըցէ կնանոց պէնը-փէշակին»՝ թեև ես նրան իմ սեփական միջոցներով կհրատարակեի, բայց ի նկատի ունենալով, որ ալդօրինակ դրված, թեև խոստովանում եմ բարբառների մշակության նպաստող և բավական կարևոր, բայց այնուամենայնիվ, խիստ քիչ տարածվող, ինչպես Դուք էլ Ձեր նախորդ նամակովը (օգոստոս, 881) միևնույնը հայտնել էիք, ուստի ստիպված եմ, թեև ինձ էլ շատ և շատ ցավալի է, գոնե առժամանակ թողնել այդ գրքույկը լույս ընծայելը, իսկ եթե ցանկանում եք, որ շուտով տպագրվի, այն ժամանակ ես կը-դունեմ հրատարակելու միայն այն պայմանով, որ ծախսի 1/3 մասը ես վճարեմ, իսկ 2/3-ը Դուք, և գրքույկները բաժանեինք մեր երկուսի մեջ, ինձ վրա հաշվելով և цензор-ի ու մյուս հիմնարկությունների, որոնց պարտավոր ենք ուղարկել գրքույկները, այսինքն տպվածի կեսը ամբողջապես Դուք կստանաք։ Իսկ Ձեր այն առաջարկության, թե ես իմ անունով հրատարակեմ և բոլոր ծախքը միայն Դուք հոգաք, դրան ոչ մի կերպ չեմ կարող համաձայնել, հավատացեք, որ ինձ համար անկեղծ համակրությունը շատ մեծ է և բարձր, քան նյութական օժանդակությունը։ Հավատացեք, որ եթե հրատարակություններիս վաճառման գործը մի փոքր լավ ընթանար, առանց ուշացնելու իսկույն կհրատարակեի, բայց դժբախտաբար շատ քիչ է վաճառվում։

Կարող եք և այսպես անել։ Ձեր «Ղլըցէ կնանոց պէն-փէշակից» խոստանալով. գնել առնվազն մի 25 ռուբլու և փողերը կանխիկ ինձ ուղարկել, որ տպվելուց ստանաք ձեր աշխատությունից 25 ռուբլու գրքեր (Ղլ. կն. պէն. փէշ.) և բացի այդ էլ 100 օրինակ ավելի՝ Ձեր աշխատության իբրև վար-

ձատրություն։ Թեև խոստովանում եմ, եթե միջոցներս ներեին, ավելի շատ կարող էիք ստանալ։ Գրքույկից պետք է տպել 700 օրինակ, որովհետև ավելի դժվար է տարածել, թեև ես մինչև հիմա 1000—1200 օր. էի տպել տալիս, ծախս լավ թղթի վրա և լավ թանաքով կնստե 40—45 ռուբլի, ուրեմն եթե կամենում եք շուտով տպել և համաձայն եք առաջարկած պայմաններիս մեկի հետ, ուղարկեցեք ինձ 25 ռ. և հաղորդեցեք, թե որ պայմանովն եք համաձայնում և մինչև զատիկ արդեն լույս տեսած կլինի Ձեր աշխատությունը։ Գինը 10—15 կ. կարելի է նշանակել։ Իսկ լեզվի համար ցանկալի էր, որ մի բանի խոսք ի նկատի ունենայիք և թույլ տայիք ինձ ուղղել. օրինակ «լՀա» մենք ասում ենք «լըհա», (2 երես), ոչ թե «խօխի ձէրքան փոնած», այլ ասում ենք «խօխին ձէրքան փոնած» և այլն։

Այստեղ տպարաններում որոշ գին չկա, կանխապես պետք է որոշել, թե ի՞նչ թղթի վրա եք կամենում տպել, ի՞նչ դիրքով, ի՞նչ տառերով, որ ըստ այնմ գինը որոշեն։ Գրաքննիչին կարելի է ուղարկել հետևյալ ձևով։ Առաքելյանը այստեղ էր և գնաց դարձյալ Շուշի։ Ուղարկում եմ 11 օր. «Սոխ. և խուլ.», որից մեկը Ձեզ նվեր է, իսկ մնացյալը խնդրեմ վաճառել։ Տեր Արսենից ստացեք ծախվածների փողը։

Ձեր Տ. Նազարյան
(ստորագրություն)

2

7 փետրվարի 1884 թ.

Սիրելի Կոստանդ-ջան!

Քեզ երկու նամակ էլ եմ գրել, հուսամ արդեն ստացած լինիս, բայց հոդիս, քեղանից վաղուց է նամակ չունիմ։ «Աղբիւրի»[2] տարեդարձը տոնեցինք, Կոստա՛նդ. քանի քանի անգամ քեզ հիշեցինք, կենացդ խմեցինք, տեղդ շատ-շատ էր երևում, խմբագրության բոլոր անդամները խնդրեցին, որ իրանց կողմից քեզ շատ-շատ բարև և համբույրներ գրեմ։ Լավ քեֆ արինք։ Բոլորը հարբել էին, ոչ ոք տուն չգնաց, մեկ-մեկ զարկել էին, բոլորն էլ հարբել էին։ Ի միջի այլոց էր և «Նօբատի» վրաց մանկական ամսագրի խմբագիրը, նա էլ խնդրեց, որ հատկապես իր կողմից քեզ բարև գրեմ։ Մի խոսքով, Կոստա՛նդ, էդպիսի օրերում ավելի ընկերը-ընկերով միտն է ընկնում, ավելի է մրմնջում սիրտն ու հոգին։ Բայց Աստված դարդումանի է, դոշ տու, շուտ արա պրծի, եկ։ Այստեղ առանձին նորություններ չկան։ Բարիկենդան է, ամեն օր դիմակահանդեսներ, պարահանդեսներ, երաժշտական երեկոներ է լինում բարեգործական ընկերությունների օգտին։ Հայոց թատրոնն էլ մի կերպ քաշքաշ է լինում, մյուս տարվանից կամենում են էլի նորոգել։ Հա՛, քո պիեսաների համար Տեր-Գրիգորյանին[3] քանի անգամ ասել եմ, պատասխանել է, թե չեմ գտնում, չգիտեմ ով է վեր առել։ Բայց ես յախիցը ձեռք չեմ վերառնում, խոստացել է մինչև ամսույս 10-ը անպատճառ գտնել և ինձ տալ։

Ադամյանը Պետերբուրգում ֆուրոր է հանել, ռուսաց առաջնակարգ լրագիրները հիացած են։ Անցյալ կիրակի կաթողիկոսի ընտր. պատգամավորների ընտրությունն էր, տեղիս լրագրությունը միմյանց միս են ուտում այդ խնդրի վերաբերմամբ։ Պոլսում մի շատ մեծ դիրքով, ամենօրյա լրագիր է հրատարակվում՝ «Արևելք»[4] վերնագրով։

Ինչպես տեսնում ես «Աղբիւրը» ներկա տարվանից ամսի սկզբներումն ենք հանում, արդեն № 3-ը կեսից ավելի շարված է, սպասում եմ անդադար «Մեր բարերարներին» շարունակության, որ կորցրել ենք և շատ-շատ ցավում ենք, որ № 2-ում չկարողացանք տպել, շատ հարմար էր...* հետ այդ №-ում, հույս ունեմ այս ամիս կարողանանք տպել։ Կոստա՛նդ. քուքուլակ մի անիլ, թեկուզ մի երես, միայն ամիս մի № համար բան հասցրու մեզ։

* Անընթեռնելի բառ (Ծ. Հր.)։

Ճանապարհորդական գեղեցիկ տպավորություններիդ շարունակությունը մնաց ու մնաց։

Գարոն[5], Նեոնելովը, Աղայանը, Մնացականը[6], Լևոնը և բոլոր մերոնք քեզ շատ բարև են անում։

Ինչպես կկարդաս № 2-ում Աղայանի «Զմեռը՝ սառնամանիք վերտառով, մի հանգով ցենզորից դուրս բերինք։

Ոչինչ չես գրում քո մասին, ինչ ես անում, ինչ չես անում։ Մկոյի երազը շատ լավն էր, շատ հավանողներ կան։

Հա՛, Կոստանդ, Զատկվա համար մի բան այժմյանից պատրաստիր և էնպես արա, որ մինչև մարտի 10-ը ստացվի տեղս։ Աղայանը Զատկվա համար Գարունն է նկարագրելու Զմեռից հետո։ Երևի արդեն փրանսերեն այժմ լավ կոտրատում ես, այդտեղ եթե մանկական ամսագիրներ ձեռքդ ընկնի, մի աչքովդ անցկացրու և մի հայացք ձգի, «Աղբիւրի» ծնողների բաժնում դնելու։ № 3ի հետ կլինի ծնողների բաժինը։

Դեռ այստեղ ցուրտ է և ձյուն է դալիս։ «Վարժարանը»[7] հրատարակվելու է, այսպես են ասում։ Էլ ինչ գրեմ հոգիս, ուզում եմ երկար խոսել քեզ հետ, բայց այս անիծած քաղաքում մի բան էլ չկա, որ մեզ խոսացնելու առարկա լինի, առայժմ ցտեսություն, քո Տ. Նազարյան (ստորագրություն)։

3

«Աղբիւր»
ամսագրի խմբագրություն
Թիֆլիզ

6 սեպտեմբերի 1885 թ.

Սիրելի Կոստանդին,

Նամակդ ստացա։ Բրոշյուրներիցդ 50 օրինակ ուղարկել եմ Շուշի, որ քեզ տան, 50-ն էլ վաղը (այժմ ուշ է) փոստ կգցեմ քո անունով տեղդ, ինչ կուզես արա, բաժանիր կամ ծախիր, կամ ձրի տուր, 100-ը քո սեփականությունն է, գրիր Շուշուց ում հանձնեն։

Գրքերդ ուղարկել կտամ։ Ցենզորը այստեղ չէ, Կոդժոր է, երկու անգամ գնացի, չկային, կաշխատեմ, հոգի՛ս, շուտով քեզ հասցնել։

Նամակովս ուղարկում եմ М. Богданов[8]-ի... [ռուս., անընթ.] պատկերները ստացել եմ նույնպես, ինձ քեզանից անչափ գոհ կանես, եթե դրա պես մեր կյանքի հարմարը գրես գարու կամ ցորնի, կամ հաճարի արտի մասին, այնպես, որ պատկերները պետք գան։ Եվ որքան շնորհակալ կլինիմ, եթե հասցնես ինձ, մինչև ամսույս 20-ը։ Գիտեմ, Կոստանդ, շատ ես զբաղված բայց դոշ տուր, ուղարկիր։ Բացի այդ մի ոտանավորից, կամ բանաստեղծությունից մի բան ուղարկիր թե աղբեր ես։ Այս №-ի համար չկա։ Քո Փիփին էլ տպեցի։ Էլ քեզ ինձ մոտ բան չունիս առանց տպելու։ Կուզես այժմ բաղաքաղը գրիր։ Մի խոսքով, Կոստա՛նդ, էս №-ից պետք է շարունակ բան ուղարկես, թեկուզ ամեն անգամ մի երես, միայն թե ուղարկես։ Եթե այս համարից չղրկես (որի. ... ...)*։

Նիկ. Տեր-Ավետիքյանը[9] և Սիմոնը ինձ մոտ են, քեզ բարևում են։

Ուղարկում եմ թղթերս, հետո ետ ուղարկես, որ կտրելու եմ «Родник»-ները։

Քո Տ. Նազարյան (ստորագրություն)։

P. S. Նորությունները կգրեմ, սպասում եմ պատասխանիս։

* Երկու բառ, անընթեռնելի (ծ. հր.)։

4

3/VIII. 07
Թիֆլիս

Սիրելի Կոստանդ

Նախ համբուրում եմ մայրիկիդ ձեռը, սիրունիկ զավակներիդ և բարևներս Տիկին Սոփիային[10] ու հ. Բաբգենին[11], որին նամակ առանձին չեմ գրում, շոգ է և սաստիկ զբաղված եմ մեր ընդհանուր գործերով, այն է՝ ս. էջմիածինը փրկելու իր լքյալ վիճակից։

Արդ լսիր և միասին հ. Բաբդենի հետ արեք ինչ հարկն է։

Ես արդեն արտասահման գրեցի, որ պետք է 60—70000ր. վանքի հողերը ջրելու համար, մոտ 6—7000 դեսյատին և հարմար բամբակի, խաղողի են։ Մանրամասնություններ չեմ գրում, որովհետև գու պետք է կազմես ընդհանուր առաջարկ—ինվենտար վանքի և ապա տաս ինձ կոնցեսիա շահագործելու, բարելավելու համար կազմել ընկերություն։

Հարցերս.

1) Կարելի է արդյոք 70000 ր. լավ ոռոգել 7000 դեսյատին հող, որի վրա բամբակ ցանվի, խաղող աճեցվի։

2) Ճշտիվ պետք է ասել 7000* ր. բոլորովին բավական է ջրի ընթացքը հիմնովին փոխելու, թե կարող է պատահել, որ ջուրն իր ընթացքը այժմս էլ մի այլ տեղ կփոխե։

3) Սանահնու անտառները շահագործելու։

4) Հանքերը։

Մի խոսքով ինչ առաջարկներ ունիս, արա ընդարձակ, որոշ և շատ մանրամասն։ Կոպեկներով, այլևս գանձանակով Ազգային Աթոռ չի կարելի պահել։ Եվ այդ բոլորը շուտով, որովհետև ամսիս վերջին մեկնելու եմ քաղաքից արտասահման։

«Աղբյուրի» համար ղուշի թևով նյութ ուղարկիր։ Հուլիսի №-ն էլ վաղը լույս կտեսնի և այս №-ի մեջ դու ոչինչ չունես։ Շարվում է օգոստոս-սեպտեմբեր-ը, որ պետք է լույս տեսնեն մինչև ամսույս 20-ը և ապա ես արխային գնամ մինչև հոկտեմբեր։

Եթե Սկյուռի մասին կարող ես, փութով մի նյութ ուղարկիր, մի հրաշալի Սկյուռի, դեռ չտպված երբեք, մեծ կլիշե ստացա։ Ապա մանկական ոտանավորներ։ Քո տետրակի մեջ կար «Կովի կթելը», լավ բան էր։ «Ծաղիկների մեջն» էլ կիսատ մնաց։ Միայն շուտով ուղարկիր ինչ ուղարկելու ես, որովհետև գրաշարները երկուշաբթի, ամսույս 7-ից արդեն կսկսեն շարել օգոստոսի №-ը։

Գեղափնջիկը վճռեցի հոկտեմբերից հրատարակել, երկու շաբաթը մեկ և խոստացած 12 №-ից ավելի տալ։

Բարևներս, Քո Տ. Նազարյան (ստորագրություն)։

Հովհ. Հովհաննիսյանից փութով առ իր լուսանկարը և հասցրու ինձ, ինքը ծույլ է, որ մնաց իրան, կուշանա, ալբոմի համար անհրաժեշտ է։

(ստորագրություն)

5

17/II. 918
Խմբագրություն
Աղբյուր և Տարազ
հանգեստների
Թիֆլիս

Սիրելի Կոստանդ,

Երեկ ստացա նամակդ, որ երկար օրեր ճանապարհորդել է։ Ի՞նչու ես

* Պետք է 70000 ռ. (Ծ. հր.)։

հիվանդացել։ Սպասում եմ երկրորդ նամակիդ, որ տեղեկացնես թե ինչ ձևով Քեզ բավարարեցին։ Ուրախ եմ մտադրությանդ համար։ Հիշատակարանդ անշուշտ շատ հետաքրքրական կլինի, հաճույքով կզետեղեմ և Տարազում, կգաս, կտեսնես։ Ես փափագ ունեմ Ղարարաղ և Ղարաբաղցիներ մի մի հատոր ժողովածու հրատարակել, գուցե այնտեղ ավելի հարմար կլինի։ Աղբյուրի յուրաքանչյուր համարի 2—3 երես ուղարկիր ղուտ մանկական գյուղական բնագիտական հոդվածներ։ Աղբյուրի № 1-ը կրկին Քեզ ուղարկեցի, վաղուց էր լույս տեսել, և Քեզ ուղարկել էի Քո հին հասցեով։ Տարազը այս շաբաթ կուղարկեմ։

Համբուրում եմ,
Տ. Նազարյան (ստորագրություն)

6

Խմբագրություն
Աղբյուր և Տարազ
հանդեսների
Թիֆլիս.
20/XI. 919

Սիրելի Կոստանդ,

Տպագրվում է Ալմանախ, որ լույս է տեսնելու դեկտ. 15-ին։ Սրա մեջ մտնում են բարբառներ, Սահակ-Մեսրոպից սկսած մինչև մեր օրերը, որքան հնարավոր է։ Շատ-շատերն են բանակցում և հրաշալի է լինելու։ Ուղարկիր մի փայլուն ֆելիետոն Ղարաբ. բարբառով, կուզես տառերի գյուտի շուրջ և հետը մեր երկիրը, մի խոսքով բովանդակությունը ինքդ ընտրիր, միայն մի լազաթին, մնայուն բան ուղարկիր։ Այդ լինելու է Գեղափնջիկ մեծադիր օրացույցի հավելված։ Կուզես նոր տաբու շուրջ գրիր։ Մի խոսքով, ինչ քեֆդ է գրիր և հասցրու շուտով։

Այնուհետև Աղբյուրի համար միթե ամիսը մի կամ երկու երեսաչափ բան չես կարող ուղարկել։ Պանորամդ բիսմըլլա արա և անունդ ու շվաքդ Աղբյուրից մի կտրիր, ես շալիշ եմ գալիս, որ ամենքդ միշտ հիշվեք և անպակաս ընեք Աղբյուրից, աննամուս աննենք, դուշմանի սրտավը չընինք։ Համբույրներս։

Քո Տ. Նազարյան (ստորագրություն)

Հոգեհարազատ իմ անփոխարինելիս

Կոստանդ,

7

Zav. St. Saurent
Monte Carlo
Monaco

Հենց այս բոպեիս ստացա Ամերիկայի «Կոշնակ Հայաստ.»[12] № 19 շաբաթաթերթը (մայիս 10-ից), որ «Ազդ. կեանք» լուրերի մեջ տպված է՝ «Գիւղատնտեսի մը յօբելեանը»։ «Մայիսի 25-ին կլրանայ գյուղատնտես Կոստանդին Մելիք-Շահնազարյանի գործունեության 40-ամյակը։ Կազմված է հոբել. հանձն. Ար. Երզնկյանի[13] նախագահությամբ։ Հանձնաժողովի կողմե ընտրված գործադիր մարմինը արդեն ձեռնարկած է նախապատրաստական աշխատանքի»։

Ահա բոլոր տպվածը։

Սակայն միթե սոսկ գյուղատնտես?

Միտքս նահանջում է 40 տարուց էլ դեմը և ապա մինչև այսօր։ Ձեռներս դողում են, սիրտս բաբախում։ Ո՞րքան-ո՞րքան երկար ճանապարհ կտրեցինք։ Քո «Ղլըցէ կնանոց պէնը-փէշակը...»։ Աննման մեր իդիլյա Ղալա։ Քանի՞

քանի՜ քեզ նման անմահ զավակներ է ծնել և այսօր ինքը մոխիր ու անծուխ։ Հրատարակչական] գրասենյակիս 1 սերի հրատարակության վերջին գըրքույկն է, որով սկսվում է 2-րդ սէրիճ՝ պարբերականը՝ «Աղբյուրը»։ «Աղբյուրը», որ ա՜յնքան-ա՜յնքան փայլուն էջեր պճնազարդված են քո սքանչելի ոտանավորներով, պատկերներով, պանորամաներով, պատմվածքներով են, եւ․ եվ եթե «Ղլըցէ կրնանոց պէնը-փէշակով» փակվեց 1 սերի հրատարակությունս, շնորհիվ ցենզուրայի, ուրիշ արգելք էլ չկարողանալով գտնել, տպագրված, գրաքննչից թույլատրված անմեղ «Ղլըցէ կրնանոց պէնը-փէշակը» արգելեցին, չտվավ դրաքն. ատյանը թույլտվությունս տպարանից հանելու, համարելով հրատարակությունս պարբերական, իբրև թե տարին երեք գրքից ավելին համարվում է պարբերական։ Եվ այդ եղավ խթան, որ արագացրի պայքարս ցենզուրայի դեմ ու ստացա «Աղբյուրի» հրատարակման իրավունքը, ու «Ղլըցէ կրնանոց պէնը-փէշակի» շապիկը փոխեցի, որի վրա և ավետվեց «Աղբյուրի» անդրանիկ հայտարարությունը։ Այս անդրանիկ հաղթանակս էր ցենզուրայի դեմ։ Այս ժամանակ եղավ Թիֆլիսում և անդրանիկ բարեպաշտությունը ժանդարմների բնակարանումս։ Ղորմի քեզ, Սերգեյ Իվանիչ (Պել-ատերինց, Պաշըցյի) հայտնի քեֆ-ռամաղ քաշած Ֆրանսիայում և վերջը ծերության օրում Թիֆլիսում ժանդարմ. Թարգման. իդիալիստ-լոթի, դիտմամբ մտել էր այդտեղ, այժմս միայն ըմբռնում եմ։ Եվ իմ քեռուս (Համբարձում աղա Հախումյանին)[14], որ այդ ժամանակը Թիֆլիսումն էր, ասել էր՝— «Բախին ասա, վախի վոչ, չեեrp չս fշեr էլլա կեալա. ըն»: Սրա շնորհիվ էլ խան Ազատին բանտից ազատեցի, Մարկոսյանի (Հակոբ Մելիք-Բախտամ. կնոջ հորեղբոր) կալվածքի հրաշխավորությամբ։ Եվ այնուհետև անհամար տառապանք, զրկանք, թե հաճույք, հրճվանք, հաղթություն։

Իսկ այժմս՝ «Թաշա ճաւեr ըն տուս եկալ. աchկաքի ձւանf ըն ածըմ»: Կարծըմ ըն թա հենց ուրանք ըն։ Մախլաս։

Ապա Քեզ ինչպես ձանապարհ դրինք, Մոնպելիե։ Մի՞տդ է հրաժեշտիդ ընթրիքը Մուշտաիդի մոտ, «Սալխինո» այգում,

Երբ է կատարվելու հոբելյանդ? Ես թեև ապահով «անասնական կեանfս» (իհարկե ոչ շնորհիվ հայերի, որոնց հետ ոչ մի առնչություն չունեմ, զգում եմ գարշանք Եվրոպայի հայերից և Եվրոպայի քաղաքագետներից), Միջազգ. մամուլին աշխատակցում եմ և գրոշներ ստանում նրանցից, սակայն ուշմիտքս հայրենիքս է և Ղարաբաղը, մտորում եմ վերադառնալ և լծվել աշխատանքի Ղարաբաղի վերաշինության։ Այդ ինչպես է, որ Նախիջևանը անկախ հանրապետություն է լինում, իսկ Ղարաբաղը մի Նախիջևանի չափ էլ չկա? Սիրտս շատ է լիքը, Կոստանդ։ Այդ կոմունիզմը հենց, մի՞թե իմ մտորմունքս չէ իրագործված։ Ամբողջ իմ կյանքը, այդ ո՞ր կոմունիստն է ժամանակակից ավելի փայլուն նկարագիր ունեցող, որ կարող լինի մրցել ինձ հետ։ Սակայն կոմունիստ, առանց բռնության, որտեղից էլ լինի։ Իմ «Արոզա»[15]-ն մի՞թե նույն վարդապետությունը չէ։ Ես դրամի իսպառ ոչնչացման եմ կողմնակից և ընդունում եմ սոսկ «աշխատանքի չէկը»։

Կոստանդ, իցե թե հոբելյանդ կատարվի մինչև վերադարձս։ Ինչպե՞ս, ի՞նչով շնորհավորեմ Քեզ, որ տենչանքիս գեթ նվազ արտահայտությունը լինի։ Կարոտակեզ համբույրներս Քեզ, արևշատություն Քեզ և ինձ էլ հնարավորություն վերադառնալու իմ սրտի ուզածին պես տոնելու Քեզ Գյավուր Ղալին գլխին[16], ա՜խ, կլինի՞ այդ օրը, կտեսնե՞մ։

1923 Նոր տարուն Վիեն-Լայպցիգ-Բեռլին հրատարակեցի Տարազի դիրքով «Քառասնամեակ տարագիր Աղբյուրի» նվեր ցաքուցրիվ մեր որբերին։ Բեռլինում պ. Բեգզադյանի[17] ձեռք մի քանի հարյուր հատ ուղարկել եմ Հայաստան (Խորհր. Ռուս. առևտր. մաք.), ապա երկու կապոց Վեհ. կաթողիկոսին, մեկ կապոց Արմ. Երզնկյանին, Երևան և մի կապոց բժշկպ. Նավասարդյանին[18] Թիֆլիս։ Մոսկվայից այդ կապոցներից 3 վերջինը վերադարձրել էին ինձ Բեռլին, սրանք պոստով պատվիրած էի ուղարկել և պահում եմ պոստի վերադարձածները։ Այդ հրատարակությանս մեջ տպված է քո «Աղբյուրի» 1-ին տարում ոտանավորը՝ «Ո՜ճ եrկrագոrծ, եrկrագոrծ, fանի սի-

ռուն է fo գործ...»: Բայց կաթողիկոսի երկու կապոցից մեկն էին վերադարձրել, չգիտեմ մեկը ստացել է, թե ոչ։ Արմայիսին ուղարկել էի իր հովանու տակ հաստ. բաժանել և Քեզ ու մյուս Երևանի աշխատակիցներին։

Ջերմ համբույրներով Քո (ստորագրություն)։

23/V—924

Օղլուշաղիդ, խոխորցդ շատ-շատ բարև, համ էլ ամեն հարցնողաց։

Տ. Ն. (ստորագր.)

8

Սրտիս հատոր Կոստանդ,

Степанакерт
(Нагорный Карабах)
сельско-хозяйств.
техникум

Այս րոպեին, հինգշաբթի, 17 սեպտ. ստացա հույժ ցանկալի նամակդ, որին և իսկույն պատասխանում եմ, թողնելով հարցերիդ պատասխանը, որ հարցուփորձ անելուց (հրատարակ. շուրջ) գրեմ։

Նախ շնորհավորում եմ Քեզ և օղլուշաղիդ, որ պապիկ, տատիկ, պատրոն հու սկեսուր, հաներ հու զանքաչ եք դարձել։ Բոլոր ճղներով ավելի ու ավելի կենսարար արմատ լինեք, նորանոր ծիլուբողբոջ, ճղներ տալով ու համեղ, բուրալից պտուղները վայելեք երկուսդ էլ դեռ շատ-շատ տարիներ։

Ամմա վեր ջերմըտենդ ըս անըմ, արան ըոաղի լըմ։ Շուտ թա եռ Ղարաբաղ պիտմա կյաս։

Սրան մասին ավելի լուրջ կխոսինք։

Շատ-շատ ցավեցի, որ Երևանում ոչ քեզ, ոչ Անանունին[19], ոչ Աշոտ Աթանասյանին[20], ոչ ըժշ. Վ. Արծրունուն[21] և ոչ շատ շատերին չգտա։ Կամենում էի տեսնել Տեր-Գարեգինին[22], այդ ծերունազարդ ծերոսնուն, որ Շուշում այնքան տանջել էին և այսօր գեթ սփոփանք են իրեն զավակները իրանց փայլուն աշխատանքներով ու մեծարում են բազմերախտ ծնողին։

Գալով ինձ ահա 44 օր է, որ Ստեփանակերտում եմ։ Գալուցս գրել եմ հետևյալ հայտագիրը՝

«Ինքնավար Խ. Ղարաբաղի Կենտգործկոմի նախագահության».

Տ. Նազարյանի դիմում՝

Կյանքիս փշրանքը ողջակեզ եմ բերում ինքնավար Խ. Ղարաբաղին։ Տոչորված եմ նրա մտավոր-էստետիկական ու տնտեսական վերաշինությունովն։ Խնդրում եմ ընդունեք աշխատակցությունս, այսօրվանից համարելով ինձ Ձեր սպասում։ Ցանկալի է օր և ժամ նշանակեք լսելու զեկուցումս, հրավիրելով աշխատակիցներիդ ունկնդրության ու ապա տենչանքս լսելուց, որոշեիք լրծվելս նպատակահարմար աշխատանքի։ (ստոր.) Տ. Նազարյան 7. VIII. 925, Ստեփանակերտ։

Ունեցել ենք ինտիմ խորհրդակցություն Լուս. կոմիսարի հետ, ուրվագծել ենք առաջարկս, որ այժմս շրջանային խորհուրդը իրանց ասելով բազմակողմանի և լրջորեն քննում է։ Ուրվագիծս ընդարձակ է։ Այս մասին գուցե պետք լինի և Երևանի հետ էլ անձամբ գամ խորհրդակցեմ։ Ղարաբաղ-Երևան հոգեպես անբաժան պիտի լինեն։ Անշուշտ հասկանում ես ինձ։

Սակայն, երբ որոշումը ուշացավ, այստեղ ամեն ինչ կրիայի քայլերով է ընթանում, սկսած պոստից։ Հարկադրված «Թիքի»[23] մի օրինակի վրա մակագրեցի և տվի Լուսկոմիսարին հետևյալը. ասելով, որ երկար սպասել չեմ կարող, ահա հրաժեշտիս տոմսը՝ «Թիքի» վրա տոմսը՝ մակագրությունս՝

«Լեռնային Ղարաբաղի Պետական Մատենադարանին.

Եթե վիճակված չէ աննման Շուշուն լինել գիտության, արվեստի մանավանդ հումաշխարհային իր տպագրական գործերով, մինչև օրս էլ դեռ անմրրրակից մի նոր Լայպցիգ, պահպանեցեք գեթ այդ անփոխարինելի անգին Շուշին իբրև մի նոր Պոմպեյ և նրա ստորոտում ծլող գեղանի Ստեփանակերտը։ Թող աճի, բարդավաճի ու հռչակվի իբրև մի նոր Նապոլի։ Այնտեղ Պոմպեյ, ավելի խավար գարում բնության տարերքին, զոհ, այստեղ «լուսաւոր»(?!) դարում տգիտության-թյուրիմացության զոհ Շուշին[24]։

Տ. Նազարյան (ստորագր.) 1/IX—925 Ստեփանակերտ։

Լուս. կոմիսարը թախանձեց ինձ չհեռանալ Ղարաբաղից, գեթ մինչև ամսույս վերջը սպասել, որ արձակուրդից վերադառնա կենտգործկոմի նախագահը, ավելացնելով որ ոչ մի պայմանով Ձեզ (ինձ) Ղարաբաղից բաց չեն թողնելու. և թե ծրագիր ուրվագիծն շրջանային քարտուղարի մոտ է, քննում է են, են, խոստացա սպասել մինչև ամսույս վերջը։

Քառասուն օր Շուշու ստորոտում, աչքերս հառած կարոտակեզ Շուշու ժայռին, վերջապես անցյալ կիրակի, սեպտ. 13-ին Ստեփանակերտի լուսանկարչին վերցրի, պայմանավորվեցի, գրպանիցս 30 ր. վճարեցի նրան ու առավոտյան 6 ժամին ոտով ճանապարհ ընկանք Շուշի և երեկոյան էլ ոտով այնտեղից ճանապարհ ընկանք ու 9 ժ. հասանք Ստեփանակերտ։ Ոչ մի տեղ ոչ գնալուց և ոչ վերադարձին և ոչ Շուշում նստեցինք։ Սոսկ մի 15 րոպե թրքաց թաղում, ոսաց եկեղեցու (այժմ թրքերի թատրոն) հանդեպ մի կոոպերատիվ անվանված խանութում չայ խմեցինք ու երեկոյան էլ 15—20 րոպե վերադարձին նստեցինք, իբրև թե ճաշեցինք։ Գնալ-գալիս չհոգնեցի, սակայն Շուշում բոլոր փողոցները, վերի, ներքևի հանգստարանները պտտեցի հեղեղ արտասուքով, ոտքերս ծալվում էին, սիրտս ուժգին բաբախում։ Շնչասպառ էի լինում։ Արտագրեցի մի շարք արձանագրություններ եկեղեցիների, դպրոցների, գերեզմանների։ Տասը նկար առայժմս հանեցի, 30 օր. համար, լավ չէ, գոհ չեմ հանված լուսանկարներից։ Մտածում եմ հնարավորություն գտնել Թիֆլիսից լավ լուսանկար բերեմ և բոլոր փողոցները մանրամասն լուսանկարեմ։ Անվնաս են մնացել բեալական դպրոցը, Ղուկասյան—Մարիամ օր. ուսումնարանը և Ժամհարյան հիվանդանոցը, այդ փառահեղ շինություններն էլ հայ կառավարությունը տվել է թրքին, բեալականում թրք. սեմինարիա, Ղուկասյան—դպրոցի խանութներում կովերի գոմ էր. խորհրդածություններ, ասելիք շատ ունեմ։

Առայժմս չեմ երկարացնում, անդադար սպասում էի, հասցեդ, ուր լինելդ իմանայի, որ սկսեի գեթ առայժմս նամակով խոսել։

Բարև ամենքին, անվանադիր չեմ գրում, ամենքին-ամենքին, և օղլուշաղիդ, գերդաստանիդ։ Մի՞թե չես ստացել «Քառասնամեակ Աղբիւրի» որ «Թիքից» շատ շքեղ և մեծ, նրա մեջ տպված է և Քո «Ո՞հ երկրագործ, երկրագործ, շատ սիրուն է քո գործ...»

Կարոտակեզ համբույրներով Քո Տ. Նազարյան (ստորագր.)
17/IX. 925 Ստեփանակերտ

9

Нагорный Карабах,
Степанакерт
сельско-хозяйств. техникум

Սիրելի Կոստանդ, նամակդ սեպտ. 11-ից ստանալուց իսկույն պատասխանել եմ և հենց նույն օրը, ապա տեսել տեխնիկումի վարիչ Ալթունյանին, որ հարևանս է, սենյակից կից է և Լուս. ժող. կոմիսար Առաքելյանին[25]։ Ինչ ասելիքն է, ասել եմ և բրոշյուրների վերաբերյալներն էլ կարգադրել է։ Քանի օրից հարցիս, թե ի՞նչ է պատասխանում, ասաց որ ինքն արդեն քեզ գրել է, որ բրոշյուրները ուղարկես, կտպագրեն։ Այսօր, երկուշաբթի, հոկտ. 5-ին հարցրի, արդյո՞ք պատասխան ստացավ Քեզանից։ Ոչ. և խնդրեց որ ես էլ Քեզ գրեմ, ուղարկես։

Շատ է, չեմ համատում այստեղի կարգերին, ամեն ինչ ավելի դանդաղ, քան նույնիսկ կրիայի քայլերը։ Ասիացիներ ամենաընդարձակ մտքով։ Մախլաս։ Նամակս ստանալուց ուղարկիր բրոշյուրներդ, կամենում ես բոլորը, կամենում ես մի մասը դեռ, և իհարկե կգրես պայմանները։ Թե բրոշյուրներդ և թե պայմանները ուղղակի Ժող. Լուս. կոմ. Առաքելյանին։ Եթե նրանից նամակ ստացել ես, լավ, եթե ոչ, գրիր որ ուղարկում ես նրան. Ս–ին Տ. Նազարյանը Ձեր հայտնած ցանկության համաձայն: Ինձ էլ իհարկե գրիր, որ մրգասյուլ տառնամ, շատ տպագրեն։

Այժմ խնդիրս՝

Հենց նամակս որ ստացար, հրատապ, առանց րոպե կորցնելու գնա «ՀՕԿ» (Հայաստանի օգնության Կոմիտեն)[26], վերցրու նրանց կանոնադրությունը (ստատուտը) մի քանի օրինակ և իսկույն պոստ գցիր ինձ հասցրու Ստեփանակերտ։ Եթե այդ կանոնադրության շուրջ, նրանից առաջ, հետո էլի հրատարակություններ, կամ եղելվածներ կան, այն էլ ուղարկիր։ Ինձ մոտ կա միայն «Հրաւիրակ» № 21[27], իսկ սրա մեջ չկա տպագրված կանոնադրությունը։ Հակառակ դեպքում, եթե տպագրված՝ կանոնադրությունը սպառված լինի, արտագրիր և այն ուղարկիր։ Միայն շուտ, շատ շուտ, դուշի թևով։ Պոստն էլ այստեղ անկանոն։ Ես եմ գնում ամեն օր հարցնում պոստից նամակ կա՞, իրանք չեն բերում ոչ ոքի։ Հիսուն տարով ետ են մնացել։

Գնացի Շուշի և նույն օրն էլ ոտով գիշերը վերադարձա։ Հետս տարել էի լուսանկարիչ, 10 նկար հանել տվի, երևի կտպագրեմ։ Կամենում եմ մի Տարազ—Երկրորդ երիտասարդություն տպագրել այստեղ, իբրև պրոպագանդ Ղարաբաղի վերաշինության։ Եթե տրամադիր է «Տըմբլաչի խաչանը» քերծի դըլխին մի նվախտ անելու, այդ էլ հասցրու։ Մի լավ ֆելիետոն, արտաշարժհումոր, որ արտասահմանի ղարաբաղցիք քրքիջ-արտասուքով կարդան։ Միայն Հայաստանի օգնության կոմիտեի կանոնադրությունը, նախ, նամակս ստացած օրը պոստ գցի։ Իմ առաջարկը՝ Ղարաբաղի վերաշինության ծրագիրս անցել է բոլոր ֆաղիսները։ Սեպտ. 30 Ժողովրդ. Կոմիսարների Խորհուրդը Կենտ. գործ. Կոմիտեում ունեցավ նիստ, որ հրավիրած էի և ես, նորից լսեցին զեկուցումս և միաձայն որոշեցին արգելք չհանդիսանալ իրականացնելու։ Այժմս հրավիրում եմ կազմակերպչական ժողով կանոնադրությունը մշակելու և ներկայացնելու հաստատման[28]։ Հիմնադիրներ կլինես և դու, և Անանունը, և դերասաններ Աբելյանը, Ավետյանը[29] և մեր բոլոր Ղարաբաղի թագ ու պսակ, ցաք-ցրիվ եկածները։ Անշուշտ կանոնադրությունը հաստատելուց հետո Բագու, Թիֆլիս, Երևան, պիտի գնամ բոլոր Ղարաբաղցիներին տեսնելու։

Քեֆդ գալու ա, որ տեսնաս ծրագիրս գործունեության։ Ամմա ըստեղ շատ-շատ ըն ծանդըրերիշ, էտ ա վեր ինձ հոքի—հըվատից քըցըմ ա։ Հինչ անեմ, յոլա ըմ տանըմ, հըմփերում ըմ։

Լոխցու շատ-շատ բարև թե քու օղլուշաղիդ, թե մերոնց ամենքին։ Եթե Վասիլի Դավիդովիչ Ղորղանովը[30] արտասահմանից եկել է (հարցրու պետական մատենադարանում Երվանդ Թաղիանոսյանից)[31], տես Վասիլի Դավիդովիչին, ինձանից շատ հարց ու բարև։ Ուրախ կլինեմ, որ տեղեկացնի իր և տիկնոջ վիճակը։ Ասա երևի նոյեմբերին մի քանի օրով Երևանում ըլվամ։

Հիասքանչ եղանակ, հրաշակերտ բնություն, ուղղակի մնացել եմ զմայլված և ապշած, թե ինչպես այսպիսի անզուգական աշխարհը այսքան թշվառ, այս աստիճան ամայի. գեթ մի երեք տարի ապրեմ և ինձ խոչընդոտ չլինեն, հրապարակ պիտի հանեմ մեր այս աշխարհը Շվեցարիայի հետ մրցության կանչելով։ Բացվում են շատ դպրոցներ։ Ալթունյան, Մեցումյան, Էդիլյան[32] արդեն պաշտոն ունեն։ Քանի օր է եկել է և Ռոմանեոս Մելիքյան։ Անհամար վարժուհիներ է, որ ամեն օր ճանապարհում ենք գյուղորայքը։ Ափսոս միայն պոստը անկանոն. շանում եմ որ ամեն օր գնա դա։ Ապա ջուրը քիչ է, շուտով ջուր բերենք։Շինվում են շատ տներ։ Շուշու վերաշինության շուրջ խմորը շատ ջուր կտանի. անձամբ, ապա թե ոչ տասնյակ թերթեր պիտի գրեմ[33]։ Կարոտակեզ համբույրներովս Քո Տ. Նազարյան (ստորագրություն)։

6/X. 925 Ստեփանակերտ

Нагорный Карабах,
Степанакерт.
сельско-хозяйств. техникум

10

Սիրելի Կոստանդ,

Սիրելի Կոստանդ, հոկտ. 6-ին գրածս ստացած կլինես և անշուշտ թե ՀՕԿ-ի կանոնադրությունը և թե խնդրածս նվախտ ֆելիետոնը պոստ գցած։

Այստեղ պոստը շատ անկանոն է, Քո նամակը ստացա հոկտ. 8-ին և իսկույն գնացի թե Լուս. ժող. կոմիս, թե շրջանային քարտուղար Հայկ Սեյլանյանին, կարդացին նամակդ, խոսադի, ոգևորեցի, խոստացա։ կատար ածել փափաքս, Քեզ անհապաղ հրավիրել։ Ապա գնացի ընկեր Ղարագյոզյանին[84]։

Եզրակացություն և ультиматум-и, որ այս առաջիկա մինչև կիրակի 17 հոկտ. դու պաշտոնապես ստանաս հրավեր։

Երեկ կրկին ընկ. Սեյլանին տեսա. ասաց, որ Հող. ժող. կոմատի հետ էլ խոսացել է, և դու պաշտոն կունենաս թե՛ Ստեփանակերտում և թե գյուղերում։

Ընկեր Առաքելյանը նույնպես վստահեցրեց և ասաց, որ մինչև այս ամսույս 17—20-ը թուղթը՝ հրավերը կուղարկվի իրան։

Սա պնդում է, որ բրոշյուրները իրան ուղարկելու, Քեզ ինքը պաշտոնապես էլ գրել է։

Հենց Ղարաբաղի օգնության Կոմիտեն որ հաստատվեց, բաց կթողնենք կոչը, ուրեմն ֆելիետոնդ հասցրու իսկույն։

Եթե Լեոն տեղդ է, ասա նրան մի 10—20 տող էլ այդ կոչի մասին ինքը իր անունից նաև կանչի և ուղարկե անհապաղ։

Ապա ես կգնամ քանի օրով Բագու, Գանձակ, Թիֆլիս և Երևան. տեղի մեր ղարաբաղցիների հետ էլ խելք խելքի տալու։

Երկու անգամ Շուշուց պատգամավորություն եկավ ինձ բարևգալիք և հրավեր Շուշի։ Հրավերը իհարկե ընդունեցի օդում, խոստանալով երբ գնամ, իրանց կայցելեմ։

Գնացել էի Շուշի ոտով և այնպես էլ վերադարձել, լուսանկարչին վարձել էի, մի շարք տեսարաններ լուսանկարեց, գոհ չեմ։ Լոտեյը(՞) կուզեմ։

Ներփակյալս տուր Վասիլի Ղորղանյանին պետ. մատենադարան (Եր. Թաղիանոսյանին), Աբելյանին, Ավետիսյանին և ամենքին համբույրներս և բարևներս։ Իհարկե ապագայում օղուշաղդ էլ կգա, բժիշկ տղադ էլ այստեղ կպաշտոնավարե։

Քո Տ. Նազարյան (ստորագր.) *12/X. 925*

Այսօր (հին տոմար 29 սեպտ.) լրացավ 67 տարիս, դրա..... էլ այս ավետաբեր նամակս, որ հրավեր կստանաս ծննդավայրումդ շարունակելու պանծալի աշխատանքդ։ Քո Տ. Նազարյան (ստորագր.)

11

Тифлис, Дворянская, 14

Սիրելի Կոստանդ, Ղարաբաղից վերադարձա. Թշվա՜ռ մեր ծննդավայր։ Ասում-գրում էիր «եկ-եկ-եկ», ահա և եկի։ Թամարդ[85] էլ է գալու, երևի կգրի։ Ղարաբաղը առանց յուրայինների։ Չգիտեմ առայժմս որոշելիքս։ Կգամ Երևան, կխորհրդակցենք։ Լեոյին, Ստ. Կանայանին[86], Դ. Անանունին և ամենքին բարևներ, ուրեմն ոչ դու, ոչ Լեոն խնդրածս հոդվածները Ստեփանակերտ չուղարկեցիք, կգամ անձամբ կստանամ։

Հասցես՝ վերև գրածս։

Իսկ երբ կգամ Երևան, չգիտեմ, համենայն դեպս մինչև մարտի վերջը Թիֆլիսումը եմ։ Բարև օղուշաղդդ.

Համբույրներովս Քո Տ. Նազարյան (ստորագրություն)
17/III. 926 Թիֆլիս

12

Սիրելիս Կոստանդ, Երևանից ուղի ընկնելուցս Քեզ չտեսա։

Խնդիրս՝ **Արցախի**[87] **համար**

1) Տմբլաչի Խաչանի մի հակիրճ ֆելիետոն. Թարիփլամա Ղարաբաղին, հողուջրին, մարդ ու կնկա, ծաղիկ ու ծառին, օդ ու անտառին, այս բոլորը աշակերտական տետրակի 2—3 երեսից ոչ ավելի։

2) Լեոյին ասա, որ խնդրածս հոդվածը դարձյալ նույն իմաստով և նույնքան՝ 2—3 երես աշակերտական։

3) Բժշ. Խուրշուդ Մելիք-Փարսադանյանին[88]*, որ տված հոդվածիս հակիրճ ամփոփումը, բնագրի հետ հասցնե ինձ փութով։*

Այդ երեք հոդվածները գիրս ձեռիդ հասած րոպեից 24 ժամվա ընթացքում **պոստ պիտմա քցված ընի:** *Ասիս վեչ անց կենաս, մրհասուլ տաո, որ հասնի։*

Հասցես՝ Тифлис, Дворянская ,14 (Крестьянская),
Т. Назаряну, кв. Ив. Назарова

Բարև օղլուշաղիդ և ամեն հարցնողաց

Թիֆլիս, 24/V. 926

Տ. Նազարյան (ստորագրություն)

Մնացած երկար հոդվածդ, որ ինձ կարդացիր, հետևյալ №-ից մաս-մաս։

Ծանոթագրություններ

1. Մելիք-Շահնազարյան Կոնստանդին, Տմբլաչի Խաչան (1857—1940). մասնագիտությամբ գյուղատնտես, գրող-երգիծաբան, հասարակական գործիչ, հրապարակախոս։

2. Աղբյուր. մանկական պատկերազարդ ամսագիր, հրատարակվել է Թիֆլիսում (1883—1918), հիմնադիր-հրատարակիչ, խմբագիր՝ Տ. Նազարյան։

3. Հավանաբար նկատի ունի դերասան, հասարակական գործիչ Հ. (Վանո) Տեր-Գրիգորյանին (1851—1931)։

4. «Արևելք». օրաթերթ, հրատարակվել է Կ. Պոլսում (1884—1912)։

5. Հավանաբար Գաբրիել Միրզոյանը։

6. Մնացական—Տ. Նազարյանի քեռին՝ Մ. Հախումյան։

7. Վարժարան. մանկավարժական ամսագիր, լույս է տեսել Թիֆլիսում (1882—1884)։

8. Բոգդանով Մ. (1841—1888). ռուս գիտնական-բնախույզ, կենսաբան. գրել է նաև բնագիտական բովանդակությամբ մանկական գրքեր։

9. Տեր-Ավետիքյան Նիկողոս. հասարակական գործիչ, թղթակցել է «Աղբյուրին»։

10. Տիկին Սոֆիա. Կ. Մելիք-Շահնազարյանի կինը։

11. Հայր Բաբգեն. էջմիածնի միաբաններից։

12. Կոչնակ Հայաստանի, Հայաստանի կոչնակ (1900—1968). տպագրվել է Միացյալ Նահանգներում (Նյու Յորք, Բոստոն), քաղաքական, տնտեսական, կրոնաբարոյական շաբաթաթերթ (1960-ից՝ ամսաթերթ)։

13. Երզնկյան Արամայիս (1879—1939). քաղաքական, պետական գործիչ։

14. Համբարձում Հախումյան. Տ. Նազարյանի քեռին, Շուշվա մեծահարուստներից, նաև ազգային բարերար։

15. «Սրոզան» լույս է տեսել 1913 թ.։

16. Գյավուր-Ղալա (Անհավատի բերդ). Շուշին կոչվում էր նաև Գյավուր-Ղալա, որը հուշում է նաև նրա պատկանելիությունն ու ծագումը։

17. Բեկզադյան Ալեքսանդր (1879—1939). քաղաքական, պետական գործիչ, հրապարակախոս։

18. Նավասարդյան Բագրատ (1852—1934). բժիշկ, հասարակական գործիչ, հրապարակախոս։

19. Անանուն Դավիթ, Տեր-Դանիելյան (1879—1942). քաղաքական, հասարակական գործիչ, պատմաբան, հրապարակախոս։

20. Աթանասյան Աշոտ, Սալ-Ման (1870—1941). մասնագիտությամբ դյուղատնտես, հրատարակիչ-լրագրող, երգիծաբան։

21. Արծրունի Վահան (1857—1947). մասնագիտությամբ բժիշկ, հասարակական գործիչ, մանկավարժ, լրագրող։

22. Տեր-Գարեգին. Շուշվա քահանաներից։ Քաղաքական գործիչ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի, համալսարանի ռեկտոր Հակոբ Հովհաննիսյանի (1922—30) հայրը, որին Շուշին հրկիզելու ու ավերելու օրերին թուրքերը ենթարկել էին խոշտանգումների։

23. «Թիքան» Տ. Նազարյանը տպագրել է Եվրոպայում 1923 թ. բարեգործական նպատակներով։

24. Ղարաբաղի վերաշինության՝ Տ. Նազարյանի ծրագրերի մասին տե՛ս նրա «Կոչ Օվսաննա Ղարաբաղին» (մեր հրապարակումը՝ «Երեկոյան Երևան», 1990, № 4)։

25. Առաքելյան Առաքել (1887—1980). բանաստեղծ, հասարակական-մշակութային գործիչ, ուսուցիչ։

26. ՀՕԿ (Հայաստանի օգնության կոմիտե). հիմնադրվել է 1921 թ. սեպտեմբերին, դադարել գործելուց 1937-ի դեկտեմբերին։ Ունեցել է շուրջ 200 մասնաճյուղ արտերկրում։

27. «Հրավիրակ». ՀՕԿ-ի պաշտոնական պարբերականը Հայաստանում (1925—1928)։

28. Ղարաբաղի օգնության կոմիտե՝ ՂՕԿ. Եվրոպայից հայրենիք վերադառնալուց հետո Տ. Նազարյանին հաջողվում է ՀՕԿ-ի օրինակով Ստեփանակերտում հիմնադրել Ղարաբաղի օգնության կոմիտե։ ՂՕԿ-ի հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ. հավանաբար այն գերեզման իջավ իր կազմակերպչի հետ միասին։

29. Ավետյան. հավանաբար Ավետյան Ավետ (1897—1971). դերասան։

30. Ղորղանյան (Կորզանով) Վասիլ Դավիթի (1865—1934). զինվորական, երաժշտագետ, հասարակական գործիչ։

31. Թաղիանոսյան Երվանդ (1864—1948). հասարակական գործիչ, լրագրող, թարգմանիչ։

32. Ալթունյան, Մեջլումյան, Էդիլյան. մանկավարժներ, որոնք 20-ականի սկզբներին Ղարաբաղ էին գնացել երկրամասի կրթական գործին մասնակցելու համար։

33. Շուշին վերականգնելու խնդիրն իրոք շատ ջուր է վերցնում։ Տ. Նազարյանը մտադիր էր Շուշին կոոպերատիվ հիմունքներով վերականգնել և այդ կապակցությամբ դիմում է Անդրդործկոմի նախագահությանը։ (Տե՛ս այդ մասին հաս-քաղաքական ուղղությունների հետազոտման ինստիտուտի արխիվ, ֆ. 1022, ց. 2, դ. 203, թ. 1—2)։ Սակայն մարզի այն ժամանակվա ղեկավարությունը խափանում է բոլոր փորձերը։

34. Ղարագյոզյան (Կարակոզով) Արմենակ (1890—1937). քաղաքական, պետական գործիչ։ Վարել է թուրքամետ քաղաքականություն։

35. Շահնազարյան Թամար (1901—1978). Կ. Մելիք-Շահնազարյանի դուստրը, երգչուհի, մանկավարժ։

36. Կանայան Ստեփան (1860—1936). բանաստեղծ, պատմաբան, մանկավարժ։

37. «Արցախ». Տ. Նազարյանը ՂՕԿ-ի ծրագրերի իրականացման շրջանակներում, մտադիր էր հրատարակել «Արցախ» անունով հանդես։

38. Մելիք-Փարսադանյան Խուրշուդ (1883—1959). բժիշկ-մանկավարժ, հասարակական գործիչ։